



# Մ ՈՒՐՐԵ ՅԱԿՈՐԸ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### Վարագայ Մութրե Խաչ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(65.22-25)

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ

(3.18-26)

**Ի** մաստուծիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կռթնին՝ որպէս Տիրոջ: Իր իմաստութեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր հանձարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն:

Որդեակ, իմաստութենէն մի՛ բաժնուիր բնաւ խրատներուս եւ խորհուրդներուս հետեւէ՛,

որպէսզի կեանք ունենաս, շնորհքներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգստանան: Որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելու. ցերեկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր նինջով քնանաս: Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

... Խրատներուս եւ խորհուրդներուս հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս...

նինջով քնանաս: Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

**Ա**յսպէս կ'ըսէ Տէրը.- «Կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս զուր տեղ պիտի չ'աշխատին ու դժբախտ զաւակներ պիտի չ'ծնին, որովհետեւ Աստուծմէ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան,

թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց զաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ զիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. “Ի՞նչ կ'ուզէք”: Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եզան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չզպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լերանս վրայ», կ'ըսէ Տէրը:

... իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(6.14-18)

**Գ**ալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ

աշխարհին համար: Կարեւորը մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբույժ թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրքերուն սպինները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԵՆՍԻ  
(24.30-36)**

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի ղրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»:

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՄԲԱԿՆԵՐ**

---

«ՆՈՐԱՎԱՆՔ»  
16-25 տարիքի երիտասարդներու  
համար  
երկշաբաթական դրութեամբ  
Կիրակի առաւօտեան՝  
ժամը 9.45-10.45

---

«ՆԱՐԵԿ»  
26-40 տարիքի երիտասարդներու  
համար  
երկշաբաթական դրութեամբ  
Կիրակի առաւօտեան՝  
ժամը 10.30-11.30

---

Հետաքրքրուողներէն կը խնդրուի  
կապուիլ դիւանատուն՝  
514 331 5445 կայան 202

**ՀԻՒԱՆԴԱԵՐՈՒՄ ԱՅԵՂՈՒԹԻՒՄ**  
Բարեհաճեցէք հեռաձայնել  
Արժ. Տ. Գառնիկ  
Աւ. Քհնյ. Գոյունեանի.  
514 909 5203 քիփն: